

վում են հաւասարապէս. «Մշակի» վերջին ցուցակներից պարզ կերևայ Փօթիի փոքրիկ հայխումբի ինչ աստիճան ազգասէր լինելն և թէ ինչ եռանդով է օգնել ազգի կարօտութիւններին. Փօթիի մէջ առանձին ժողովարան, գրատուն կամ բիբլիոտեկ չը կայ, միայն հարկաւորժամանակ ժողովն լինում է քահանայի տանը, իսկ լրագիրներ կարդալու համար ղայֆեխանան: Վերջին ժամանակներս Դիարբէքիրից կամ ուրիշ տեղերից աղքատ հայ ընտանիքներ են անցնում Փօթիով ղէպի թիֆլիս. որոնք իրանց բոլոր անցքերը պատմելուց յետոյ օժանդակութիւն են ստանում ժողովրդից փողով և հազուստով: Նորերումս մէկ ամբողջ աղքատ ընտանիք բաղկացած երեք հոգուց Փօթի եկած էին Հայաստանից իրանց համար ապահով տեղ փնտռելու. պ. Ստեփիան Ղամբարեանը այդ ընտանիքն ընդունեց իրան հովանաւորութեան տակ նշանակելով ամիսը 10 լուրջ փողով, գէտին, բնակելու համար տուն, ցանելու համար զանազան սերմեր և զործիք գետին փորելու, որից եկած օգուտներն կրկին կը մնան յօգուտ հայ աղքատ ընտանեաց: Փօթիի հայ երիտասարդները իրանց կողմանէ պարոն Ղամբարեանին մեծ շնորհակալութիւն են նուիրում: Կեցցեն այդպիսի ազգասէրները: Վերջացնում եմ նտմակս այս մէկ քանի խօսքերովս. թող միւս քաղաքի հայ ընակիչներն էլ օրինակ վեր առնեն Փօթիի փոքրիչմբից, թող յետ չը մնանք ուրիշ ազգերից:

Ղազար Տէր-Ղազարեանց

ՆԵՐՔԻՆ ՀՈՒՐԵՐ

Տպելով «Մշակի» ներկայ համարում Փօթիից
դրած նամակը, հարկաւոր ենք համարում յայտ-
նել որ Փօթիի թղթակիցը վաղարշապատցի Ղա-
զար Տէր-Ղազարեանցը չէ, այլ դա մի բոլորո-
վին ուրիշ անձն է: Պարոնը ինքն խնդրում է
մեզ յայտնել որ նա վաղարշապատցի Ղազար
Տէր-Ղազարեանցը չէ, այլ նա ղարաբաղցի է, և
բնակվում է սովորաբար Փօթիում:

Անցեալ 1880 թվին յունվարի 15-ին «Մշակը» ունէր 550 բաժանորդ, իսկ այս տարի յունվարի 15-ին մենք արդէն ունենք 800 բաժանորդ, ուրեմն 250 աւելի, քան թէ անցեալ տարի։ Բաժանորդների այդ տեսակ մեծ թիւ յունվարի կէսին մենք երբէք ունեցած չենք։

Մեզ զրում են Լալվարի պղնձահանքից (մաղանից), որ գտնվում է Սանահնից 5 վերստ հեռաւորութեամբ, թէ յունվարի 7-ին, զիշերով, աւազակները մտել են յոյն տիկին Սօփիա Մաքրողեանցի տուն, տիկին Սօփիային սպանել են դաշոյնով (խանջալով), կտրել են որովայնը և թափել են աղիքները, խկ ծառային և աղախնուն մորթել են. Զարագործները դեռ ևս անյայտ են. Յոյները պատմում են որ բաւական մեծ քանակութեամբ արծաթեղին են տարել չարագործները:

Լոռու գաւառի Արօրի գիւղից մեզ հաղորդում
են որ յունվարի 2-ին Սարգիս Ուհանեանց, որ
նոյն գիւղի տանուտէր էր, նաւթով այրվեց և
փախճանվեցաւ:

«Մշակի» խմբագիրը շնորհակալութիւն է յայտնում այն բոլոր անձինքներին, որոնք այս օրերս թէ հեռազիրներով և թէ մասնաւոր նամակներով բարեհաճել են շնորհաւորել «Մշակի» տասներորդ շրջանի սկսվելը և աջողութիւն են ցանկացել մեր լրագրին:

Մեղ հաղորդում են ՇՈՒՇՈՒՑ, որ այդ քաղաքում մի երիտասարդ, որ աւարտել է իր ուսումը Էջմիածնի ճեմարանում, դիտաւորութիւն ունի հրատարակել մի ամսագիր «Գործ» անունով:

ՇՈՒԼԱՎԵՐԻՑ մեզ զրում են. «Մեր զիւղի
պրիստավլ պկ. Մամիկոնեանը աշխատում է մոց-
նել ժողովրդի մէջ ինքնաճանաչութիւն, ինքնա-
օգնութիւն և պարտաճանաչութիւն. Նա ժամա-
նակ առ ժամանտկ հաւաքում է զիւղի նշանա-
ւոր բնակիչներին, յորդորում է նրանց որ զըպ-
րոց պահեն, բացատրում է նրանց ուսման ան-
հրաժեշտութիւնը, մի և նոյն ժամանակ քաջա-
լերում է զիւղացիներին, խոստանալով, որ միշտ
կօգնէ նրանց իր կարողութեան չափ նրանց ա-

մեն մի օպտաւէտ ձեռնարկութեան մէջ, Զմեռ-
վայ պարապ ամիսներում շատ դործ լինելով,
նա խնդրում է ժողովրդից օգնականներ տալ ի-
րան, որպէս զի հացի ամբարներ իրագործի դիւ-
ղի մէջ: Մամիկոնեանը խոստանում է փողոցնե-
րը զծագրել տալ և ժողովրդի օգնութեամբ գար-
նան սկսվելուն պէս նոր դպրոցի շինութեանը
ձեռնամուխ լինել: Մի ամիս կը լինի որ մեր
գիւղից հեռացաւ երկրաչափ Ռւշիարօվ, որ իր
գործունէութեամբ մի տխուր յիշատակ է թողել
գիւղացիների վրա: Ոչ ոք չէ ափսոսում նրա հե-
ռանալու մասին: »

ՍՊԱՀԱԽԻՑ մեզ գրում են, որ Նորերումս Նուկ-
րիան գիւղում վախճանվել է մի մարդ. Հանգու-
ցեալի աղջականները չը կամենալով որ գիւղի
քահանայ տէր Սարգիս Տէր-Անտօննեանը, որ սիր-
ված չէ գիւղում, թաղման կարգը կատարի, խըն-
դրում են կօնսիստօրին որ ուրիշ քահանայ նշա-
նակի թաղման կարգը կատարելու, բայց կօն-
սիստօրիան մերժում է. այն ժամանակ գիւղի
ժողովուրդը թաղում է հանգուցեալին առանց
քահանայի. Երբ արդէն ննջեցեալը թաղում է լի-
նում, այն ժամանակ կօնսիստօրիան հրամայում
է Սղնախի գործակալ քահանային թաղման կար-
գը կատարելու:

Հաւլաբարի ուսումնարանների մասին շատ
քիչ են գրում, նրանց մասին շատ քիչ էլ հո-
գում են: Նրանց մասին չեն հոգում, մինչև ան-
գամ թեմական վերատեսուչը, որ չը գիտէ թէ
Հաւլաբարի ամեն ծակ ու ծուկում դպրոցներ
կան, թէն շատ անբարեկարդ: Եթէ պ. Գ. Բար-
խուղարեանը միջոց և ժամանակ չունի վերահս-
կել այդ բոլոր դպրոցների վրա, ինչի չէ դիմում
նոյն իսկ Հաւլաբարում ապրող մի քանի երի-
տասարդներին և չէ խնդրում նրանց իրանց օդ-
նելու, իր օգնականների պէս վերահսկելու այդ

կորած, մոլորված դպրոցների վրա։ Մենք կը ցոյց տանք երկու երիտասարդների վրա, որոնք մեր կարծիքով կարող էին յանձն առնել այդ աշխատանքը և մեծ օգուտ տալ Հաւլաբարի ուսուման գործին։ Դրանք են պ. պ. Թէմուրազեանց և Գուլակեանց, որոնք Ներսիսեան դպրոցում են աւարտել իրանց ուսումը և վաղուց է պարապում են ուսուցչութեամբ, ուրեմն բաւական փորձառու ժողովրդական մանկավարժներ կարող են համարվել։

—

Կախէթի ԿՈՒՂԱՇ գիւղից մեզ զրում են։ Այդ գիւղը բաղկացած է 120 տուն վրացի բընակիչներից, որոնք բոլորն էլ Միքէլածէ իշխանական տոհմին են պատկանում, թէև բոլորն էլ գիւղացիներ են, և 200 տուն հրէաներից։ Երկու ամիս սրանից առաջ Փոխարքայի օգնական իշխան Մէլիքով եկաւ այդ գիւղը։ Դրան ի հարկէ շատ փառաւոր կերպով ընդունեցին և ճաշ տուեցին։ Իշխանը ամենքի հետ վրացերէն էր խօսում։ Թող բարձրաստիճան հայերը օրինակ առնեն իշխան Մէլիքովից, որ չէ արհամարհում

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԻ մեր թղթակիցը դարձնում է թէ Էջմիածնի և թէ մանաւանդ Նորին Վեհավուութեան ուշադրութիւնը այն հանգամանքի վրա, որ Վլադիկավկասի հայ հասարակութիւնը զուրկ է մի կրթեալ հայ-լուսաւորչական քահանայից։ Երբ, հարցնում է թղթակիցը, վերջ կը դրվի տգէտ և մոլի տիրացուների քահանայ ձեռնադրվելուն։ Դեկտեմբեր ամսի սկզբներում Աստրախանի վիճակի բոլոր եկեղեցիներում կարդացվեցաւ Սինօղի Մշաբերականը, որով արգելվում է վիճակաւոր առաջնորդին ձեռնադրել քահանայ որ և է անձն, որ չէ աւարտել իր ուսումը մի բարձրագոյն կամ միջնակարգ դրացում, օրինակ ճեմարանում կամ Ներսիսեան գոլրոցում։ Չէ անցնում մի շաբաթ, —և յանկարծ Էջմիածնից հեռագրով հրամայում են Աստրախանի առաջնորդին ձեռնադրել քահանայ Վլադիկավկասի մի տիրացուին, որ ոչ թէ միայն ոչ մի տեղ ուսում չէ աւարտել, այլ առհասարակոչտ, անզրագէտ մի անձնաւորութիւն է,

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պարլամենտը բացվելու ժամանակ կարգվեցած է առաջին համարութեամբ, Ալգեթ կոչված զետի վրա: Գիւղը ունի 70 տուն բնակիչ, որոնցից 10 տուն յոյներ են, որոյն էլ քարտահներ, 4 տուն հասակու մա-

կորդեր և պարոններ, ես հրաւիրեցի
ձեզ ժամանակից առաջ ձեր աշխատանք-
ները սկսելու համար, ի նկատի ունենալով
օրակարգ նշանաւոր հարցերը, որոնք ան-
յապաղ պէտք է՝ քննվեն։ Իմ յարաբերու-
թիւնները օտար պետութիւնների հետ բա-
րեկամական են։ Չերնօգօրիսկան հարցը
լուծվեցաւ և թէպէտ բերլինի դաշնագրի

մնացած, բայց ես նրանց վրա առանձինութիւնը եմ դարձնում։
Տրանսվաալի մէջ ծագած ապստամբութիւնը ստիպեց ինձ եռանդութ միջոցներ գործադրել և յետաձգել այն նախագիծները, որոնց նպատակն էր արտօնութիւններ տալ դաղթականների զաւակները կրթութիւնը ըստանային։ Արանից մի քանի տարի առաջ Յովսէփ Արարատեանը, դալով Դուռնուկ, զանազան նոսառումներ անելով զիւղացիներին, յորդորում

Խօսելով աֆգանական պատերազմի մասին, թագուհին նկատում է, որ նո վերջացած է, որ զօրքերը յետ են կանչված չնդկաստան և որ նրանց մի բաժինը միայն ժամանակաւորապէս զրաւում է և անդահարը:

Երլանդիայի մասին ծառի մէջ ասված է,
որ այս տարի կալուածական յանցանքների
թիւը համեմատաբար մեծացել է և որ
անձնական ապահովութիւնը պաշտպանե-
լու համար կարելի եղած տնօրինութիւն-
ները արված են: Ծառը նկատում է, որ
թագուհու իրաւունքները բաւականացու-
ցիչ չեն կարգը պահպանելու, օրէնքը յար-
գել տալու և բնակիչների գոյքը և անձ-
նական ազատութիւնը պաշտպանելու հա-
մար: Այդ իրաւունքները ստանալուց յե-
տոյ թագուհին նոր օրէնքներ կը պահն-
ջէ Երլանդիայի մէջ եղած անբաւականու-
թեան առաջն առնելու և նրա օրէնսդ-
րութիւնը բարւոքելու համար:

Թէպէտ 1870 թուականի կալուածական օրէնքը նպաստեց իրլանդացի Փերմելների բարօրութեանը, բայց նա բաւականացուցիչ չէ և հարկաւոր է նրան լրացնել և վերաքննել:

Պարլամենտին կառաջարկվի փոխել այն
օրէնքը, որ թոյլ է տալիս մարմնական պա-
տիժ զօրքերի և նաւատօրմների մէջ ծա-
ռայողների համար:

ԱՆԳԼԻԱ
—
Արագիրների մէջ կարդում ենք հետեւալ
տեղեկութիւնները։
Դեկտեմբերի վերջերին անգլիական հա-
մայնքների ժողովի մէջ դեռ ևս քննվում էր
անգլիական թագուհու գահական ծառի
պատրաստութիւնը։ Այդ վիճաբանութիւն-
ները սովորականից հակառակ դեռ ևս երկար
ժամանակ կը տեսն և այդ վիճաբանութիւն-
ների ժամանակ կը պարզվեն այն հարցերը,
որոնք պէտք է քննվեն անգլիական պարլա-
մենտի մէջ։ Գլադստօնին հարց առաջարկ-
վեցաւ, թէ արդեօք նրան յայտնի են Յու-
նաստանի և Թիւրքիայի վտանգաւոր յարա-
բերութիւնները։ Մինիստրութեան նախա-
գահի պատասխանը նշանաւոր է նրանով,
որ նա սպացուցանում է, թէ պետու-
թիւնների մէջ դեռ ևս համաձայնութիւն-
չէ կայացել յոյն-թիւրքական վէճը խաղաղ
ճանապարհով լուծելու մասին։ Այդպիսով

Հաստատվում է պետութիւնների մէջ եղած
անհամաձայնութիւնների մասին տարած-
ված լուրերը և այդ անհամաձայնութիւն-
ների պատճառը այն է, որ Անգլիան անի-
րաւացի է Համարում Փրանսիական կառա-
վարութեան առաջարկութիւնը զիջումների
մասին Յունաստանի կողմից։ Այնու ամե-
նայնիւ Գլադստօն յոյս ունի, որ գործը
կարող է խաղաղութեամբ վերջանալ։

նա երկրորդական դիրք է բռնում իրան-
գական հարցի պատճառով, որ նոյնպէս
պարլամենտի վիճաբանութիւնների առար-
կայ է դարձել։ Պարլամենտի անդամներից
մէկը, համակրելով կալուածական այն օրի-
նագծին, որ Գլադստոն մտադիր է առա-
ջարկել, առաջարկեց այդ օրինագծի քըն-
ութեանը չը սպասել և հիմիկուց մի

մասնաժողով ընտրել, որ նշանակէ կալուածական հարկերի քանակութիւնը՝ չապընդում էր, որ այդպիսի կարգադրութիւնը միջոց կը տար կառավարութեանը չը դիմել ստիպողական և արտաքոյ կարգի միջոցներին։ Փաստերով ապացուցվեցաւ, թէ քանի որ Երևանդիայի Աջ ոլժունեն սովո-

բական օրէնքները, կառավարութիւնը ան-
կարող է զսպել իրլանդացի ապստամբներին։
Այն ժամանակից որ սկսվել է Պարնելի
դատաստանական գործը, Իրլանդիան համե-
մատաբար հանգիստ է, բայց հանգստու-
թիւնը ժամանակաւոր է և իրլանդական
առաջնորդներից ներշնչած։

Նիքներ, Հայեր, ասօրիներ և այլն, օրա-
կան հացի կարօտ են։

Ահա, ուրեմն, այն պարսից զօրքերը,
որոնք գալիս են իրանց հպատակներին
սլաշտանելու արիւնարբու քիւրդերի դէմ,
բայց իրանք աւելի մեծ բարբարոսութիւն-
ներ, վայրենութիւններ և գաղանութիւններ

Անզլիական կառավարութեան համար
անշրաժեցա է խիստ միջոցներ գործադրել
մինչեւ որ քննվի կալուածական վերանորո-
գութեան օրինագիծը։ Երբ ամենքին յայտ-
նի կը լինի այդ օրինագիծը, նա կը հանգս-
տացնի իրլանդացիների մեծամասնութեանը
և իրլանդացի խռովարաներին կը զրկի
այդ մեծամասնութեան համակրութենից և
օգնութենից։ Երկիրը կատարելապէս հանգս-
տացնելու համար պէտք է լօրդերի ժո-
ղովը հոգայ և Իրլանդիային շնորհէ այն
օրէնքները, որոնց նա մի քանի ժամանակ
առաջ մերժեց, չը նայելով կառավարութեան

U.S.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՏԱՆԻՑ

Մեր Դավրէժի մոռացութեան տակ ընկած
հայ թատրօնի հարցը կրկին զարթեցաւ. Այս
անգամ Խնայողական ընկերութիւնը նրան թե
և թիկունք դառնալով՝ առաւ. իր խնամոց տակ,
Վիլավա թաղում կառուցած դահլիճը խախուտ
լինելով՝ արդէն քանդվեցաւ և տեղի հեռաւորու-
թեան պատճառով էլ անյարմար էր և մանա-
ւանդ որ շինված էր եկեղեցու բակում: Այժմ
բուն քաղաքի մէջ, հայոց թաղում, պ. Գորո-
յիանցների տան կից փոքրիկ պարտիզի մէջ
Խնայողական ընկերութեան ծախքով շինվեցաւ
մի նոր թատրօնական դահլիճ, որը կարող է
պարունակել մինչև 150 աթոռ, այլ և ունի 3
լոժաներ: Մտաղրութիւն կայ մինչև բարեկեն-
դան մի քանի ներկայացումներ տալ, որոնցից
առաջինը տեղի կունենայ յունվարի 10-ին, ար-
դէն պատրաստվում է «Արշակ Արկորդ» ողբեր-
գութիւնը և «Պուրաօնեակ» կատակերգութիւնը»
ֆրանսերէնից թուրքերէնի թարգմանած, որպէս
զի հասկանալի լինի թատրօնում դանվող եւրօ-
պացիներին և պարսիկներին: Թէի բուն խնդրից
դուրս եմ շեղվում, բայց ես այստեղ կուղէի
ասել մի քանի խօսք: Ամբողջ Ատրպատական
նահանգի տեղական լեզուն թուրքերէն է. Ժողո-
վուրդը խօսում է թուրքերէն, բայց որովհետեւ
զրականութիւն չունի և մի յատուկ դպրութիւն
չունի, նա զրում է պարսիկերէն—տիրող աղզի
լեզուն. մինչև անգամ Քիւրղիստան գաւառը,
ուր խօսում են քիւրղերէն՝ զրելու ժամանակ
ստիպված են իրանց խօսածն ու մտածածը յե-
ղաշրջել պարսկերէնի, ըստ որում քիւրղերն էլ
կորցրել են իրանց զրական լեզուն,—իրանց
աթութագը,

Մեր թատերական խումբը, որ կազմված էր
մի տասնեակ աշխոյժ երիտասարդներից, չը նա-
յելով որ նրանցից մի քանիսը այժմ բացակայ-
են դժբաղդաբար, մնացածները մեծ եռանդով
գործը առաջ են տանում, ընդունելով իրանց
մէջ մի քանի նոր ուժեր. յոյս ունենք, որ ներ-
կայական միեւող ասջորակ հանոնեն:

Այժմս ի դէպ է, որ մի քանի խօսք էլ մեր
Խնայողական ընկերութեան համար ասեմ, թէ
ինչ է այս ընկերութիւնը և ինչ է շինում: Այս
ընկերութիւնը կազմվեցաւ անցեալ 1880 թւի
յունվարի սկզբից. ես սրա մասին անցեալ տարի
գրել էի «Մշակին», բայց իմ այդ նամակը խըմ-
բագրատուն չէր հասել: Խնայողական ընկերու-
թիւնը մի հաստատ և հիմնաւոր կանոնադրու-
թիւն ունի 60 երիտասարդ անդամակիցներով,
որոնք անփոփոխ են և նրանց թիւը սահմանա-
փակ. Նա ունէ մի գործադիր ժողով, որ ըն-
տըրվում է բոլոր անդամակիցներից քուէար-
կութեամբ: Ընկերութեան նպատակն է նոյն ե-
րիտասարդաց ապագան ապահովել, նրանց իւրա-
քանչիւրից ամսական 8 դռան կամ 3 րուբլ
թղթադրամ վճար ստանալով, իբր աւելորդ ծախ-
քերի խնայողութիւն: Անդամակիցները 1880
թւի յունվարից մինչև ապագայ 1900 թւի
յունվարը, այսինքն 20 տարի շարունակ կամ
240 ամիսներ պարտաւոր են իրանց ամսական
վճարը հատուցանել ընկերութեան գործադիր ժո-
ղովին առանց ընդհատելու: Եթէ որ մի անդամ
էւ ամբար ու, ացնում է մինչև մի ամբողջ տարի,

նա զրկվում է ընկերութիւնից և նրա տեղ և
ընտրվում է մի ուրիշը. եթէ որ մի անդամ սիկ
մեռնի, նրա մինչև այն ժամանակ վճարած գու- կոր
մարը իր տոկոսիքով տրվում է մեռնողի ժա- կա

ին, բայց ոչ յառաջ քան 1900 թուականը, ետև իրաւունք չը կայ 20 տարին չը լրացնի կերութեան գումարին մի որ և իցէ ճառով ձեռք տալ կամ նրան բաժանել ընկերութիւնից մի անդամ կամենայ բարել, նա կը զրկվի մինչ այն ժամանակ իր ածից. Այս ընկերութեան ղեփիզն էլլրէժի հայ երիտասարդաց խնայողական ընթիւն 20 տարի պայմանաժամով։ Ընկեան գործադիր ժողովը, որ 60 անդամակից տարին ստանում է մօտ 2000 բուբլի այժմ այդ գումարը տոկոսներով է շահաց. Իր 2 պատուաւոր գանձապետների մօտք վարկ ունեցող վաճառականներ են, իսկ մի քանի տարուց յետ այդ գումարը հասած կը լինի. մինչև 10 հազար բուբլու ժամանակ գործադիր ժողովը բոլոր անդամների հետ խորհելով (մի ընդհանուր ժողով) աէտո է մի ահարիստական որոշ սկսէ

ակ, մի բանկ, մի կանտոր, կամ մի առևկան ճիւղ դէպի Ռուսաստան կամ մի այլը, միշտ Դավրէժը կենտրօն ունենալով։ Եղոր գործադիր ժողովը դժուարութիւնների չդիպի, եթէ որ նրան անակնկալ վտանգնեացանաւ։ Եթէ որ նա անասնեաւ, եռ ա

նէ մինչև 20 տարին և կը պործէ իր պարութիւնների համեմատ, այն ժամանակ ընութիւնը՝ կարելի է ասել որ կունենայ սսափելի գումար: Իսկ երբ 20 տարիներ ցնեն, գործադիր ժողովը հաշիւ կը տայ բանդամակցութեան և բոլոր շահած կապը հաւասարապէս կը բաժնէ 60 անդամակիցին, որոնցից խրաքանչիւրը՝ եթէ գործելող զնան՝ կարող է ստանալ 2 կամ 3 հազարի, գուցէ և դրանից էլ չատ: Մեր երիտագներից շատերը 20 տարի չանցած արդացած կը լինեն և գործելու ուժից ընկապիսինների համար մի բաւականին չափ միարական երեսոյթ կը լինի սա և մի լաւ ստի միջոց: Էլ չենք խօսում այնպիսիններ, որոնք ընկած կը լինեն աշխարհիս բնաքների չար և սաստիկ հալածանքներ Աստուած մի արասցէ) տակ: Թէ որչափ և վեն հանգամանքները 20 տարվայ մէջ, ոմանակը ցոյց կը տայ: Ուրեմն ընկերութեանը նրա համար է խնայողական, որ խոռարութիւն ունենայ իր անդամակից երիտագների ապագայի համար:

Խնայողական ընկերութեան մի տարվայ Անը անցաւ և նպաստաւոր. Նա մի քանի օր ո իր միամեայ գործունէութեան հաշխալ պէտայ ընդհանուր ժողովին, որ լինում է տարանգամ, նա պէտք է կատարէ մի և նոյն ժնակ իր առաջին տարեդարձի հանդէսր.

Ամեն կողմից ցրտի և թանձր ձիւնի ծայն
լսվում նոյն խոկ Աստրապատականի գաւառ
ից, բայց մինչև օրս մեր քաղաքը ձիւն
ած. մի երկու անդամ միայն ձիւնը, որպ
նրամաղ փոշի երեացել է օղումը, որ զեա
հասած հալուել է. եղանակը այստեղ ան

Առ է որպէս գարուն։
Առ այժմ օքրդական խնդիրը, նոցա միութեա
և նոցա արշաւանքները ձմեռվայ հետ քն
ուժուառ է ուստիեւ։ Ու առողջո սասնա

անք կը սկսեն նորից իրանց չարագործութիւնը, թէ ոչ. դժուար է զուշակել նոյնպէս, և հետեանք կունենայ և թէ ինչ կը ծնի «Քեկան միութիւնը»։ Պարսկական կառավարունը իր բոլոր բանակներին զինադադար տուչեալ զարուն, որ այն ժամանակ դարձեալ ս

նակները պէտք է զնան դէպի Փրզստա
հմանները զէն ի ձեռին և, որպէս լսում են
ու ուրիշ զօրքեր էլ պէտք է նորից կանչպ
ոքի տակ: Համգ աղան երեսում է, որ ընդ
լութիւն չէ զտել Թիւրքիայում և նրա բար
մական կապերը խզված են երեսում Շէյ
ո. Նա այժմ գանվում է Սէրդաշտ լեռներո
րձելով չարիքներ հասցնել պարսիկները
յց լեռների ամենաթանձր ձիւնից բաւակ
տասխան է լսում: Շէյխը մի ուրիշ խոր
նկութիւն է զործ դնում թիւրքաց կառավ
թեան մօտ. «Ես կամ իմ որդիս երբէք չե
րձակվել պարսից վրա, ու եղել է նրա
զմից. Երբ ես խմացայ, որ Համգ աղան աս
մբվել է և դիմել մեր կողմը, ես նրան յան
ցի Շէյխ կաղրին, որ տանէ Սովորքուլ
իջնորդէ հաշտեցնելու, բայց անիրաւ պո
լիները կամենում էին որդուս սպանել, աս
զմից զէնքի շառաչիւն լսեցի և որդուս մա
սկածանքների մէջ մնալով՝ ինքս անձամբ Ո

Ի գնացի, ուղում էի քաղաքի մզկիթը մտնել և
սղօթել, նրանք ինձ թնդանօթի գոռողներով
զատասխանեցին. անձարացած մի օր «ԱՄԱՆԱՄԲԵ-
ԿԻ Խաղաղութիւնը ասեցի ձեզ հետ լինի» և ես
լերադարձայ իմ տեղը, ասել է Շէյխը:

Սպէհսալարը, որ Սովոր-բուլաղ էր, այնտեղից
անցել է Ուրմի և յետոյ Աալմաստ և այժմ նա
տոյ է, որտեղից մինչև մի շաբաթ կը վերադառ-
նայ Դավրէժ: Նա ճիշդ մի շրջան արեց Որմիի
ծովակի չորս կողմը, նա լաւ քննեց Քրդստանի
սահմանները, տեսաւ նրանց արած աւերմունք-
ները: Սփէհսալարը թողած է մի քանի հազար
պահապան զօրք սահմանի վրա, աւստրիացի
հրահանգիչ Լիօթընան Բիկովիչի հրամանատա-
րութեան տակ, որ ճիաւոր զօրաց զլիսաւորն է,
իսկ Լիօթընան Զէքը, որ հետեակ զօրաց զլիսա-
ւորն է, օրերումս իր կրթած զօրքերով եկաւ
Դավրէժ: Նա մի օր այստեղի զօրաց հրապարա-
կում մի եւրօպական ձեխ մանօվրա արեց, զօր-
քերը լաւ խաղում էին. թաղաժառանգ իշխանը
նրան ընծայեց մի թանդաղին շալ, իսկ նրա բա-
տակիօնին ընծայեց 200 թուման: Այդ բատակի-
օնի պաշտօնակալները Թէհրանի՝ ազնուական
ասոսիենեսիո են նոր ձեռն հարնած:

Ակադեմիկոսներց և այլ գործիչների հավատությունը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ա Ե Զ Ա Զ Գ Ո Յ Ց Ե Կ Ը Կ Ա Ե Պ Ո Ւ Թ Ե Կ Ե Ց

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԹՅԱ, 15 յունվարի Այսօր
զմերային սղալատի մէջ տեկինցիներին
յաղթելու պատճառով եղած գոհութեան
մաղթանքի ժամանակ Պետրօպավլօվսկայա
ամրոցից թնդանօթներ արձակեցին: „Պօրյ-
ածօք“ լրագիրը հաղորդում է. թիւրքաց
դեսպանատունը Բ. Դրան շրջաբերականով
յայտնեց արտաքին գործերի մինիստրու-
թեանը, որ ոռւսաց դեսպանից Բ. Դրանը
ներկայացրած զրութեան համեմատ, թիւր-
քաց կառավարութիւնը կարգադրեց մի-
ջոցներ գործադրել քիւրդերի դէմ, որոնք
վեասում են Ռուսաստանի շահերին, ապս-
տամբվելով Պարսկաստանի դէմ, որը, ոյժ
չունենալով ընդդիմադրել քիւրդերի ահա-
զին հրոսակներին, իր դեսպանների միջ-
նորդութեամբ շատ անգամ խնդրել է Ռու-
սաստանից և թիւրքիայից ընդհանուր մի-
ջոցներ գործադրել քիւրդերի դէմ, որոնք
աւերում են պարսկական նահանգները:
„Պօրյածօք“ լրագիրը հաղորդում է.
անգլիական դեսպանատունը բանակցում է
ոռւսաց արտաքին գործերի մինիստրու-
թեան հետ այն սահմանների մասին, ո-
րոնք պէտք է անցկացնվեն Ախալտեկիի
Օասիսի Ռուսաստանից նոր նուածված ա-
նապատների մէջ: Պաշտօնապէս հրատա-
րակված է Բարձրագոյն հրովարտակ գենե-
րալ Ակօբելեվի անունով, որ յիշում է
նրա ծառայութիւնները և շնորհում է նը-
րան սուրբ Գէորգի 2-ր կարգի շքանշանը:

Այսօր, յունվարի 15-ին տեկինցիներին փառաւորապէս յաղթելու պատճառով պալստի մէջ պէտք է ժողովվեն բոլոր գեներալները, շտաբ և օբեր-օֆիցերները թէ զվարդիայի, թէ այլ զօրքերի և թէ նաւատորմի, զոհութեան մաղթանք լսելու համար։ Վեներալ-մայօր Լոմակին նշանակված է Ռիֆլիսի նահանգական զինուորական կառավարիչ։ Պետերբուրգի գուման գրժեվայսկուն Ս. Պետերբուրգի պատուա-

Առ Քաղաքացի ընտրեց։
Ս. ՊԵՏԵՐԲՈՒԻՔ, 15 յունվարի։ Գետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժեք
95 լ. 12 կ., երկրորդ 93 լ. 12 կ., եր-
րորդ 93 լ. 50 կ., չորրորդ 93 լ.
Ներքին 5% առաջին փոխառութեան տոմ-
սակը արժեք 222 լ. 50 կ., երկրորդ 221
լ. 75 կ., արեելեան առաջին փոխառու-
թեան տոմսակը արժեք 92 լ., երկրորդ 92
լ., երրորդ 92 լ. 12 կ., ոսկի 7 լ. 82
կ.։ Առևսաց 1 ըուբլ կօնդօնի վրա արժեք
25,09 պէնս, ռուսաց 100 լ. Համբուրգի վրա
արժեք 214 մարկ, Փարիզի վրա 265 ֆր-
անկ։ Տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆ